Պայմանագիր թիվ Ի-376

Տվյալների փոխանցման, ինտերնետային ծառայությունների մատուցման մասին

ք.Երևան
01 մայիս 2020թ.

Հեռահաղորդակցության տեղական օպերատոր **«ԿրոսսՆեթ» ՍՊԸ-ն**, հետագայում՝ **Օպերատոր**, ի դեմս տնօրեն Վ.Ալեքսանյանի, ով գործում է համաձայն ընկերության կանոնադրության, մի կողմից և **«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն,** հետագայում՝ **Բաժանորդ**, ի դեմս գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արմեն Սարգսյանի, ով գործում է Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 21/04/2020թ.-ի թիվ 16-Ա որոշման հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Օպերատորը Բաժանորդին տրամադրում է Ինտերնետ միջազգային համակարգչային ցանց մուտքի հնարավորություն, TCP/IP պրոտոկոլներով տվյալների փոխանցման ծառայություններ՝ հատկացված գծի միջոցով, համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող հավելվածում /այսուհետ՝ Հավելված/ նշված ծառայությունների տեսակների ցանկի և տեխնիկական բնութագրերի /բոլորը միասին այսուհետ՝ Ծառայություններ/:

1.2. Բաժանորդն օգտվում է Ծառայություններից համաձայն սույն պայմանագրի Ծառայությունների գրանցման, միացման և օգտագործման կարգի (կետ 2) և վճարում է համաձայն պայմանագրի Վճարման պայմանների և ժամկետների (կետ 3) և սույն պայմանագրի Հավելվածում նշված սակագների:

2. Ծառայությունների գրանցման, միացման և օգտագործման կարգը

2.1. Օպերատորը Բաժանորդին տրամադրում է ցանցային ռեկվիզիտներ, համաձայն սույն պայմանագրին կից Հավելվածի:

2.2. Ծառայությունը գրանցվում է Օպերատորի վիճակագրության սերվերի վրա Բաժանորդի անձնական ռեկվիզիտների (login, password, IP հասցեների ենթացանցի) հիման վրա:

2.3. Օպերատորը կատարում է Բաժանորդի տեխնիկական միջոցների միացում տվյալների փոխանցման ցանցին (այսուհետ՝ Ցանց), ծրագրային ապահովման տեղադրում և կարգաբերում՝ համաձայն սույն պայմանագրին կից Հավելվածի:

2.4. Բաժանորդի կողմից ինքնուրույն կատարված փոփոխությունների դեպքում, որոնց հետևանքով փոխվել են նախապես տեղակայված ծրագրային և ապարատային պարամետրերը, տեխնիկական միջոցների վերամիացումը կամ ծրագրային ապահովման տեղակայումը կատարվում է վճարովի սկզբունքով:

2.5. Օպերատորը պարտավորվում է համարժեք տեխնիկական և կազմակերպչական միջոցներ ձեռնարկել՝ Բաժանորդի կողմից ուղարկվող և ստացվող ինֆորմացիայի գաղտնիության ապահովման համար:

3. Վճարման պայմանները և ժամկետները

3.1. Բաժանորդը մատուցված Ծառայությունների դիմաց վճարումն իրականացնում է հետվճարային սկզբունքով: Վճարման հիմք են հանդիսանում Օպերատորի և Բաժանորդի միջև համաձայնեցված Ծառայությունների ցանկը, Օպերատորի սահմանած և հրապարակած գնացուցակը, փաստացի մատուցված Ծառայությունները և դրանց հիման վրա սույն պայմանագրի 3.3. կետով նախատեսված հաշիվ-վավերագրերը:

3.2. Ծառայությունների մատուցման դիմաց վճարման ենթակա ամսական վարձավճարների չափը որոշվում է համաձայն սույն պայմանագրին կից Հավելվածի և ներառում է նաև կապի ապահովման համար անհրաժեշտ կապուղիների կազմակերպման, սարքավորումների կարգաբերման և ծրագրային ապահովման ծախսերը:

3.3. Հաշվետու ամսվան հաջորդող յուրաքանչյուր ամսվա առաջին 5 (հինգ) աշխատանքային օրերի ընթացքում Օպերատորը Բաժանորդին է ներկայացնում էլեկտրոնային հաշիվ-վավերագիր՝ մատուցված Ծառայությունների դիմաց:

3.4. Բաժանորդը վճարումը կատարում է համաձայն Օպերատորի կողմից ներկայացվող էլեկտրոնային հաշիվ-վավերագրերի: Հաշիվ-վավերագրերի գումարը փոխանցվում է Օպերատորի բանկային հաշվին:

3.5. Բաժանորդը պարտավորվում է ստացված Ծառայությունների դիմաց վճարումներն իրականացնել մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 22-րդ օրացուցային օրը: Եթե Բաժանորդը մինչ այդ ժամկետը չի իրականացնում իր վճարումները, ապա Օպերատորն իրավունք ունի անջատել Բաժանորդի կապը՝ մինչև վերջինիս կողմից վճարման կատարումը:

3.6. Նշված ժամկետում ստացված Ծառայությունների դիմաց վճարումը չիրականացնելու կամ ոչ լրիվ իրականացնելու դեպքում նախատեսվում է տուգանք չվճարված գումարի 0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) %–ի չափով՝ ուշացված ամեն օրվա դիմաց: Տուգանքի ընդհանուր գումարը չպետք է գերազանցի պայմանագրի արժեքի 10 (տասը) % –ը:

3.7. Եթե սույն պայմանագրի 3.5. կետով սահմանված անջատումից հետո 1 (մեկ) ամսվա ընթացքում Բաժանորդը կրկին չի կատարում իր կողմից նախատեսված վճարումները, ապա Օպերատորն իրավունք ունի սառեցնելու ռեկվիզիտները, կասեցնելու ցանց մուտքի հնարավորությունը, դադարեցնելու ծառայությունների տրամադրումը և կասեցնելու պայմանագիրը: Եթե սույն կասեցումից ևս 1 (մեկ) ամիս անց Բաժանորդը չի կատարում վճարումները, ապա Օպերատորն իրավունք ունի միակողմանի դադարեցնել սույն պայմանագիրը և դիմել իրավաբանական բաժին՝ Բաժանորդի պարտքը դատական կարգով ստանալու համար:

3.8. Սույն պայմանագրի 3.5. կետով սահմանված անջատումը չի ազատում Բաժանորդին տվյալ ամսվա գումարն ամբողջությամբ վճարելուց:

4. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

4.1. Սակագների որոշումը և Բաժանորդի համար ֆինանսական փաստաթղթերի կազմումը Օպերատորի կողմից կատարվում է ինքնուրույն:

4.2. Օպերատորը պարտավոր է մեկ ամիս առաջ տեղեկացնել Բաժանորդին սակագների փոփոխության մասին:

4.3. Օպերատորը պարտավոր է նախօրոք՝ 1 (մեկ) օր առաջ տեղեկացնել Բաժանորդին պրոֆիլակտիկ աշխատանքների իրականացման նպատակով կատարվող ցանցի անջատումների մասին:

4.4. Ինտերնետ կապի խափանումները կարող են լինել Բաժանորդի կողմից վարձավճարների չվճարման հիմք միայն այն դեպքերում, երբ Բաժանորդը մուտքի հնարավորության բացակայության մասին ժամանակին գրավոր տեղեկացրել է Օպերատորին:

4.5. Օպերատորի կողմից պրոֆիլակտիկ աշխատանքների նպատակով ցանցի աշխատանքի դադարեցման գումարային տևողությունը չպետք է գերազանցի ամսական 24 (քսանչորս) ժամը: Այս դեպքում անջատումը չի դիտվում որպես ցանցի խափանում:

4.6. Բաժանորդը պարտավորվում է Ինտերնետ ցանցը չօգտագործել կոմերցիոն նպատակով:

5. Ծառայության որակի երաշխիքները

5.1. Օպերատորը պարտավորվում է Բաժանորդին տրամադրել որակյալ կապ:

5.2. Օպերատորը պարտավորվում է տեխնիկապես հնարավոր ամենակարճ ժամկետներում վերացնել իր պատճառով առաջացած կապի խափանումները:

5.3 Օպերատորը կապի խափանումների համար պատասխանատվություն չի կրում հետևյալ դեպքերում.

5.3.1. երբ խափանումը տեղի է ունեցել Բաժանորդի տարածքում կապի ապահովման համար անցկացված կապուղիների վնասվածքների կամ կապի ապահովման համար տեղադրված սարքավորումների խափանումների պատճառով,

5.3.2. քաղաքային հեռախոսային ցանցի գծերի խափանման դեպքում, որի արդյունքում անհնարին է դառնում Բաժանորդի մուտքը տրամադրվող ծառայությունների տիրույթ,

5.3.3. երբ խափանումը տեղի է ունեցել Բաժանորդի կողմից ինքնուրույն կատարված փոփոխությունների արդյունքում, որոնց հետևանքով փոխվել են նախապես տեղակայված ծրագրային և ապարատային պարամետրերը, կամ շարքից դուրս են եկել կապի ապահովման նպատակով տեղադրված սարքավորումները:

6. Պայմանագրի, ծառայությունների փոփոխման կարգը և գործողության ժամկետները

6.1. Տրամադրվող ծառայությունների ցանկի և տրամադրման պայմանների փոփոխությունները արտահայտվում են սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Հավելվածում և վավերացվում են կողմերի կողմից:

6.2. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Ցանցին Բաժանորդի տեխնիկական միջոցների միացումն իրականացնելու, ծրագրային ապահովումը տեղադրելու և կարգաբերելու, Բաժանորդի անձնական ռեկվիզիտները տրամադրելու վերաբերյալ կողմերի միջև համապատասխան հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից և գործում է մեկ տարի ժամկետով: Եթե մինչև սույն պայմանագրի ավարտից մեկ ամիս առաջ կողմերից որևէ մեկը նախօրոք գրավոր չի ներկայացնում պայմանագրի դադարեցման կամ փոփոխման մասին, ապա սույն պայմանագիրը համարվում է երկարացված յուրաքանչյուր հաջորդ օրացուցային տարով:

6.3. Պայմանագրի ստորագրման պահից բոլոր նախապես ձեռք բերված բանավոր պայմանավորվածությունները չեղյալ են համարվում և գործում են միայն պայմանագրի դրույթները:

6.4. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերից բացի պայմանագիրը կարող է լուծվել նաև Բաժանորդի կողմից՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Օպերատորին առնվազն 30 (երեսուն) օր առաջ:

6.5. Պայմանագրի գործողության դադարեցումը կողմերին չի ազատում միմյանց նկատմամբ մինչ դադարման պահը ստանձնած պարտավորությունների կատարումից:

6.5. Պայմանագիրը կազմված է 2 (երկու) իրավահավասար օրինակներից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

7. Կողմերի իրավաբանական տվյալները

Կողմերը պարտավորվում են 10 (տասը) օր ժամկետում միմյանց տեղեկացնել իրենց իրավաբանական և բանկային տվյալների փոփոխության մասին:

Օպերատոր	**Բաժանորդ**
«ԿրոսսՆեթ» ՍՊԸ	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 01834381	ՀՎՀՀ՝ 01540062
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Կորյունի 7, գր.3	Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26
Հեռ՝ +374 60 370000	Հեռ՝ +374 10 650015
e-mail՝ cross@cross.am	e-mail՝ tigran.voskanov@1tv.am
Բանկ՝ «Արարատբանկ» ԲԲԸ	Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 15100-33440910600	Հ/Հ՝ 2470102796740000
Տնօրեն՝ Վ.Ալեքսանյան	Գործադիր տնօրենի ժ/պ՝ Ա.Սարգսյան
_____ Կ.Տ.	_____ Կ.Տ.

Հավելված թիվ 1

Պայմանագիր թիվ Ի-376-ի

Տեխնիկական բնութագրեր

Բաժանորդին տրամադրված առանձնացված գծով ծառայությունը պետք է ապահովի Ինտերնետ միջազգային համակարգչային ցանց մուտքի հնարավորություն, TCP/IP պրոտոկոլներով տվյալների փոխանցման հնարավորություն և էլեկտրոնային փոստի հասանելիություն:

Ամսական վարձեր

24/7/365 ժամանակացույցով CIR երաշխավորված սիմետրիկ արագության անսահմանափակ ինտերնետ կապի (300մբ/վ), ինչպես նաև 32 (երեսուներկու) ռեալ IP հասցեների համար, Բաժանորդը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում Օպերատորին վճարել ամսական 323.000 (երեք հարյուր քսաներեք հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Օպերատոր	Բաժանորդ
«ՔրոսսՆեթ» ՍՊԸ	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 01834381	ՀՎՀՀ՝ 01540062
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կորյունի 7, գր.3	Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26
Հեռ՝ +374 60 370000	Հեռ՝ +374 10 650015
e-mail՝ cross@cross.am	e-mail՝ tigran.voskanov@1tv.am
Բանկ՝ «Արարատբանկ» ԲԲԸ	Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 15100-33440910600	Հ/Հ՝ 2470102796740000
Տնօրեն՝ Վ.Ալեքսանյան	Գործադիր տնօրենի ժ/պ՝ Ա.Սարգսյան
_____ Կ.Տ.	_____ Կ.Տ.